


ԲԱՅԱՆԵՐԸ

ԵԳԻՊՏՈՍ
Տարեկ. 50 ղրշ
Անցած. 25 "

ԵՐՏԱՆԱԿԱՆ
Տարեկ. 13 ֆր
Անցած. 7 "

Ամերիկա
2 Տղ. 30 անգ
ԱՄՆԱԿԱՆ
→←



ԱՌՅԱԿ Ե

Կրթութիւնք
չեն տրուիր

Ծանուցումներ
մասնաւոր պայ
մաններով

→←
Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

Թիւր 1 Ղրշ. ողջ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Ը. ՏԱՐԻ

ԱՊՐԻՆ 21 ՀԵՆՐԵԱԹԻ 1904

ԹԻԻ 301

Թէ Զատիկի և թէ տպարանի տեղափոխութեան պատճառաւ թերթերնիս անցեալ շաբթու չի հրատարակուեցաւ: Այս առթիւ պարտք կը համարինք ծանուցանել թէ՛ թերթին չի հրատարակուելովը՝ պատճառաւ: Բաւական թան մը չեն կորսնցներ, որովհետեւ մեր բնական գիրքերը ուրիշ թերթերու պէս ոչ թէ ամիսի՝ այլ թիւի վրայ գրուած ըլլալուն, այլ թիւերն ամբողջ կը յանձնուին ըստանորոգաց, եթէ երբեք ակամայ յապաղումներ ալ ունենանք:

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Էջմիածնի գանձարանէն գրուուած տոկոսաբեր արժեթուղթերուն և բաժնեթուղթերուն տոկոսի կտրոնները ներքին դործերու պաշտօնատան կողմէ զրկուած են Էջմիածին, որպէս զի գանձուելով վանքերու, եկեղեցիներու և թեմական գաղանձոցներու պէտքերուն գործածուի: Այդ կտրոնները 7 8 ամիսէ ի վեր գանձուած չըլլալով, բաւական գումար մը կը ներկայացնեն: Կըսուի թէ այս կտրոնները Ս. Կաթողիկոսին կողմէ ետ պիտի զրկուին, քանի որ մայր թուղթերը հետը չեն:

—Ամբրիկայի Բրովիտէն քաղաքը գտնուող ազգայինք 30 անգլ. ոսկի զրկած են Պատրիարքարան, Վանայ կեդրոնական վարժարանին ի նպաստ:

—Բարիզի Ժան-Կուստ Ժաղին մէջ շինուե-

լու վրայ եղած հայոց եկեղեցին դրեթ: ամբողջովն լքուած է: Եկեղեցին ներքնակողմի սալարկուած և ճարտարապետական վերջին յարպարանքերը աւարտած են: Տաղանդաւոր արտեստագէտ մը, Մ. Լըռուա, պսակաւոր ֆրանսացի արտեստագէտներու ընկերութենէն, պիտի նկարագորդէ որմերը: համբաւաւոր արտեստագետին նկարներուն մէջ առաջին տեղը կը գըրաւէ Եզեկիելի յայտնութիւնը: Անոր մէջ պիտի պատկերացուի «Տէրը», շրջապատուած շորս Աւետարանիչներէ, իրենց խորհրդանշաններով:

—Ղլարէ (Ռուսաստան) կը գրեն թէ տեղւոյն հայոց եկեղեցին փետր 26ին կողոպտուած է և երկու պահապանները սպաննուած են:

—Շաբթոս առնուած վերջին տեղեկութեանց նայելով, հունան զիւղեն դատ Նորչէն, Հարցոնք, Հէքին, Մազրէ, մեծաւ մասամբ բողոքական հայերէ բնակուած գիւղերը արուած, կողոպտուած և կրակի տրուած են:

—Այս տարի Վանայ մէջ մեծ պահոց Գ. Հարթուն, ի պատիւ Իիստի Վարագայ խաչին, ըստ աւանդական սովորութեան բոլոր եկեղեցիներու վարագոյրները բացուեր և անոր վերաբերեալ Յայտնաւորքը կարգացուեր է: Այս աւանդական սովորութիւնը երկարատեւէ ի վեր լքուած է եղեր: Սոյն Վարագայ վանքին յատուկ 130 տարուան գեղեցիկ ու պատկերազարդ կոնդակը որ տեսնէ մը ի վեր կորսուած էր, վերջերս գրտնուեր ու վանքի թանգարանին յանձնուեր է:

այդ կոնդակին մէջ գրուած է եղեր Խաչի Գիւտի պատմութիւնը :

— Հայրենիքէ առնուած համակներէ կը անգեկանանք թէ արջառաց վրայ գրուած նոր տուրքը սկսած է հաւաքուիլ : մէկ ջորին համար 30 դահկն : ձիուն՝ 20 , կովուն ու եզին՝ 10ական , հաւին և ուրիշ թռչուններու՝ Յուկէսական դահկն : ասկէ զատ , կառավարական բոլոր թույլները , որոնց վրայ արդէն նամակագրոյձներ կը փակցուէին , հիմա պէտք է նոյնպէս կրեն նոր ելած Հիճազի մարքաները , որոնց դինն է 20 դահկն :

ՄԻԹԻՆԿԸ

Ձատկի կիրակի օրը , տեղւոյս եկեղեցիին մէջ արարողութեանց տարաբնուէն ետքը , միթինկ մը տեղի ունեցաւ՝ բողոքելու համար Հոնանի գիւղի կոտորածին դէմ : Քանի մը ճառեր արտասանուեցան : Երկու առաջարկներ քուէարկուեցան : Ա. գիւղապետական աշխարհին գիւղումքնել և խնդրելու յանուն քաղաքակրթութեան պետութիւնները միջամտութիւն մը բնեն կասեցնելու համար վերահստած կոտորածները : և Բ. հանդանակութեամբ օգնել կոտորածներէ փաստածներուն , որքերուն , ալիներուն և անկեաններուն : Միթինկին որոշումը անմիջապէս հետագրուեցաւ երապական պետութեանց և Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւններուն :

Միայն , չարածին Բոթոփիկ , որ բանէ մը վար չի մնար և ամէն առթիւ կարծիք մը կը խիզախէ , յիշեալ որոշման Ռուսիոյ ևս ուղղութիւն մէջ պղտիկ հակառակութիւն մը նշմարեք է : Նկատելով որ մէկ երկու ամիս առաջուան միթինկին մէջ կշտամբական ուղեւձ մը խմբագրուած զրկուած էր այն կառավարութեան իսկ , որմէ հիմակալ կը խնդրուի որ դարման տանի մեր վիճակին :

ՀԱՌԸ ՀԱՅԱՆԼՈՒԹԻՒՆ

Ներկայիս կուգամ հրապարակաւ իմ շերտ շնորհակալութիւնս յայտնել առ Մեծայայտ Տիար Տօքթոր Տ. Էնֆիլէճեան , որ իր մասնագիտական ճարտարութեամբը աշատեց զիս ունեցած վտանգաւոր հիւանդութենէս :

Յակոբ Համբարձումեան

ՎԻՊԱԹԵՐԹ

Հրատարակուեցաւ Մարտի թիւը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բոյունիոյ Յեղափոխութիւնը

Վարչաւիա — Մարտ 28ին Ռուսիոյ ներքին գործոց նախարարը հինգ միլիոն ֆրանք աւելի յատկացուց Բոյունիոյ ստիկանութեան համար , որովհետեւ յեղափոխական շարժումը կը տարածուի ուսական Բոյունիոյ մէջ , պատերազմին ըսկսելէն ի վեր :

Հակաձորական ցոյց մը ըրած են 3 հարիւր ընկերվարական գործաւորներ :

Ռուսո-Ճաքոնական պատերազմը

Անցեալ շաբթու , Բէգրօ-Բալուքսք անուն ուսական զրահաւորը Բօրթ արթիւրի առջև ընդ ծովեայ ականի մը դարձուելով խորաակուած է ընկղմած է բոլոր իր նաւաշներով : Հաշիւ 20-30 հոգի ապատած են : Մովակալ Մարառօֆ ալ խեղդուողներուն մէջն է : Մեծ դուքս Քիրիլ ալ որ նաուեն մէջ կը գտնուէր , աղատուած է , բայց ծանրապէս վիրաւորուած :

— Չարը Մաքարօֆի յաջորդ կարգած է Սեծովի ուս նաւաորմին ծովակալ Սրբիտլով , որ արդէն ճամբայ ելած է դպի ծայրագոյն արեւելք :

— Մաքարօֆի եղերական և անակնկալ մահը մեծ սրտայտուած առաջ բերած է ամբողջ ուսիոյ մէջ : Չարահին լացած է :

— Չարը Մաքարօֆի ալիին 20 000 ռուպլի տարեթոյսով կապած է :

— Մայրաքաղաքի արեւելքի վերին հրամանատար և փոխարքայ ծովակալ Ալեքսիէվ հրամարեր է :

Կըսուի թէ այս հրամարման պատճառը ծովակալ Սրբիտլովի և Ալեքսիէվի մէջուկ տիրած թշնամութիւնն է :

— Բեգրօ Բալուքսք ուսական զրահաւորին ընկղմելուն առթիւ Բեգերապուրիկի մէջ տեղի ունեցած սգահանգէսին մէջ Չարը ծովակալ Մաքարօֆի ալիին ձեռքը համբուրեր է :

— Հաշիւ եղած է որ , եթէ պատերազմը տարւած լի տեւէ , հինգ հարիւր հազար զօրով Ռուսիոյ պիտի արժէ հինգ հարիւր միլիոն ուրբի , բայց աւելի հաւանական կը կարծուի որ մէկ միլիառ ուրբի ծախք պիտի ըլլայ , այսինքն ոչ սակաւ ուս թիւերը պատերազմի ծախքէն :

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՆՕԹԵՐ

Պուրկազ 21 Մարտ 1904

«Տեղւոյս նախորդ հոգեւոր հովիւ Յաճատ քահանայ Դերձակեան կեդրոնի կրօն. ժողովոյ կողմէ դատապարտուած է քահանայապետութենէ զազրելու երկար ժամանակի համար և ապաշխարելու, իր տան մէջ գտնուած 12 տարեկան հեգ որբուհւոյ մը պատիւը բռնաբարած ըլլալուն համար:

Յաւալի է որ Ֆիլիպէի Թաղ. Խորհուրդը ի հեճուկըս մէկ քանի անձերու, պաշտօն տուած է այդ հրէշին երբ նա գալտնի Պուրկազէն փախչելով, ի Ֆիլիպէ իր մէկ նմանին մօտ ապաստանած էր, և զայս հակառակ Պատրիարքարանի կողմէ հեռագրաւ եւ նամակաւ զըրկուած խիստ հրամաններու:

Ֆիլիպէի Թաղ. Խորհուրդի, որ անցողակի ըսենք ապօրինի ըլլալով առժամանակ հանգամանք մը ունի, եւ միայն Տիրար Ֆիլիպեանն ու տղթ. Օրմանեանն կը բաղկանայ, այս կամայական եւ օրինաց անհնազանդ ընթացքը ոչ միայն գայթակղեցուցիչ է բարոյական տեսակէտով, այլ փնտարելի նաեւ Ազգ. կեդրոնական իշխանութեան պատուոյն ու հեղինակութեան, որուն սակայն Ազգ. ընդհանուր շահերու տեսակէտով կը պարտինք յարգանք մը մանաւանդ այս ծգնաժամի միջոցին՝ երբ նա կոչուած է կարեւոր դեր մը խաղալ ընդհ. Հայրապետութեան ծանրակշիւ խնդրոյն մէջ:

Փափագելի էր որ Ֆիլիպէի պէս հայաշատ կարեւոր քաղաքի մը ազգ. գործըց զլուրը գտնուէին աւելի լուրջ և խոհական անձնաւորութիւնք:

Պուրկազի մէջ ալ գտնուած են մէկ քանիներ, որոնք վերոյիշեալ ազտոտ քահանային ինչ ծաղիկ ըլլալը լաւ գիտնալով հանգերձ, փորձած են անոր պաշտպան կանգնիլ, ասոնց պարագլուխներ եղած են Միհրան Քրիսեփ, անոր բեռուրդին Սուրին (Սարգիս Սիւնկիւճեան) ծանօթ իր տխուր անցիւղով թէ՛ յեղիպտոս և թէ՛ ի վառնայ. պանդոկապետ Աստիկ այժմ վաճառականի զիմակին տակ սնանկացեալ տուներու ապրանքները բռնելու համար ի Ֆիլիպէ հաստատուած, տիրաշոյակն Առաքել Ալթըմարմազ և ուրիշներու զրամներով հարստացած եղբարք Թորիկեան ասոնք ճիշդ այն անձերն են որք նոյնպէս տիրաշոյակ Գարեգին քահանայ Արծրունիի փախստեան միջոցները հայթայթեցին, երբ Պատրիարքական բնիչն Պուրկազ հասաւ էր՝ անոր անբարոյական արարքներուն վրայ բնութիւն մը բանալու, արարքներ որոնց իրենք ևս մեղաւորից էին:

Յառաջիկային, այս պարոններուն ութ տարիէ ի վեր ըրած ամբողջ սխալագործութիւններն երևան հանելով, պիտի յանձնենք զանոնք ժողովրդեան դատաստանին:

ԻՐԱԶԵԿ

ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ՏՊԱՐԱՆ «ՀԱՅԵԼԻ»

Աղեքսանդրիա

Սարաւիյէ, Կիլիկեան Ճաշարանի բոյի քառածիւն մէջ:

ՏՊԱՐԱՆ. — Դիւրամտաշէլի գիւնեով կը տպագրուին Հայերէն, Ֆրանսերէն, Արաբերէն, Անգլիերէն և Յունարէն այլեւոք, հասցէտու, նամակագրու, պահարան, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, յայտարարութիւններ, ևն:

ԳՐԱՏՈՒՆ. — Վաճառում և գնումն Դատական, Գիտական, Վիպական և Թատերական գիրքերու:

Վաճառում և գնում՝ ամեն տեսակ նամակագրող-մերու:

Վաճառումն Հայկական, Եգիպտական ու Եւրոպական գունաւոր և չքաղմատեսակ քաղթ-թուղթերու:

Վաճառումն գրական պիտոյքներու՝ թուղթ, գրիչ, տետրակ, պահարան, մելան, ևն:

Կեդրոն բաժանորդագրութեան արտասահմանեան Հայ թերթերու և հանդէսներու:

Հասցէ. — Տիրան Փալիսգեան
Սարաւիյէ Աղեքսանդրի

Ս Ա Ս Ո Ւ Ն Ի

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐԲԸ ԵՒ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ

(Շար. ևս վերջ)

Դիւզերու ցուցակը տալէ առաջ, պարտիմըսել թէ, իւրաքանչիւր գիւղը ինքն իր մէջ բաժանուած է գիւղականերու — այսինքն մայր գիւղէն տարիներու ընթացքին մէջ բաժանուելու են տուներ և մէկէն մինչև 2 ժամ հեռաւորութեան վրայ հիմներ են մի նոր գիւղ. սակայն ինքնին մնացեր են մայր գիւղին հետ կապուած եւ միշտ նկատուելու են անոր մի մասը այնքան ատեն որքան իրենք իրենցմէ ալ բաժանուողներ չեն տուներ: Երբ այս բաժանուումները այնքան մեծցեր են որ, իրենցմէ բաժանուողներ եղեր են, հետեւաւար իրենք իրենց մէջ կազմեր են մի ամբողջութիւն, շուրջներին ունենալով ձագեր (եթէ այս բացատրութիւնը ներելի է) այն ժամանակ նկատուելու են ինքնորոյն մի գիւղ և բաժանուելու են մայր գիւղէն:

Ահա ցուցակը Սասունի գիւղերուն իրենց բնակիչներով.

1. Շատախ

Աւարմ 30 տուն հայ, Քօփ 45 տուն, Իրի-
ցանք 10, Կեղաշէն 15, Շուշնատերկ 25,
Սէմալ 65, Շէնըգ 55, Կէլիէկանըման 15,
Կէլիէմսուր 20, Տափրկ 17, Գումար՝ 297 տուն
հայ, Վերջի երկու գիւղերուն մէջ կը գտնուին
12 տուն քիւրդ:

2. Միջին մաս

Կէլիէկուղան 120 տուն հայ, Ալիանցիք 60
Աղբի 60, Իշխնձոր 50, Գումար՝ 290 տուն հայ,
Աս գիւղերուն մէջ քիւրդի տուն չի կայ:

3. Ծովասարի փէշեր

Հերինք 35 տուն հայ, Արդիկ 10, Քըր-
դամանք 15, Հաւկոնք 6, Հոսներ 1, Քա-
րավանք 3, Խէհոլթ 8, Քօրախու և Երզնու
12, Խոժոժվանք 8, Յարկորք 15, Գումար՝
113 տուն հայ, Վերջի երկու գիւղերու մէջ կը
գտնուին 18 տուն քիւրդ:

4. Տալարիկ

Հլոդինք 25 տուն հայ, Տալարիկ 25, Հաղ-
մանք 10, Դաւլենք 15, Փորխ 15, Հոսնուտ
4, Հարթ 10, Սպաղանք 25, Արդիինք 15,
Զորեր 3, Եղկարա 12, Գումար՝ 159 տուն հայ,
աս գիւղերուն մէջ քիւրդի տուն չի կայ:

5. Բուսանաց գաւառ

Դաժպետրիկ 4 տուն հայ, Մարսթօ 10,
Մգրենք 22, Քաջառիք 15, Կոռնկէ 7, Բր-
սանք 9, Թարուկ 14, Տալհօր 3, Փշուտ 5,
Միջդեղ 28, Խնձորիկ 23, Զրթիկ 18, Պէլ-
սէնք 6, Մգրէ և Կրէձոր 12, Գոմք 18, Թա-
րանք 6, Գումար՝ 200 տուն հայ, աս գիւղե-
րուն մէջ ալ քիւրդի տուն չի կայ:

6. Խիանք

Պերմ 80 տուն հայ, Արխոնք 20, Բառկա 40
Սաղտուն 30, Հեղին 15, Արտկունք 30, Բն-
կուղնակ 40, Սէվիթ 30, Պահամա 20, Ար-
սըգ 15, Գումար՝ 320 տուն հայ, Վերջի երկու
գիւղերու մէջ կան 25 տուն քիւրդ:

7. Խուլը

Դեղերվանք 80 տուն հայ, Ահարոնք 60

Էհուպ 30, Ընձբար 80, Շուղէք 15, Կասքէ
50, Բառուր 40, Գումար՝ 355 տուն հայ, Վեր-
ջի երկուքն մէջ կը գտնուին 100 տուն ալ քիւրդ:

Ինչպէս կը տեսնուի մոյն ցուցակէն, Սասու-
նի հայաբնակ մասը կը բաղկանայ 1734 հայ և
155 քիւրդ բնակիչներէ: Թէև հայ շրջաննե-
րը քիչ բացառութեամբ տնտեսաբար քիւրդե-
րէ, սակայն զերծ չեն անոնց դրացութենէն,
Քիւրդերը կը բնակին Խուլըի, Խիանքի և Բու-
սանաց գաւառի շրջակայքը:

Զի թուականէն տուած մասունքն քիչ մը
ապրումսի մ'ընդունէ, Տալարիկի գիւղախմ-
բակները մինչև Պալանք, Խոսու կը տանէին
իրենց լեռներու բերքերը, տանձ, խնձոր, նուռ,
թուզ ու մեղր, և իր փոխէին ցօրենով: Կոտո-
րածներէն ետք թուրք կառավարութիւնը կաշ-
կանդեց մասունցիներու երթեւեկը թիւնը, որով
այլեւս չէր կրնար իր բերքերը փոխանակել:
Տալարիկցիին նաեւ կը շինէր երկաթէ գործիքներ
ու կը ծախէր գաւառացիին՝ ալմա անոթ թույլ
չորուիր նոյն իսկ գաշտ իջնել, Բակ միւս շըր-
ջանները որ խաչնարածներ էին, կոտորածներու
ատեն զրկուեցան իրենց խաչին քներէն և ապ-
րումսի միջոցներէ:

ԵՐԵՎԱՆ

Հայրենիք

ՎԱՀԱՆ ՄԱՐԿԻԱՆ

Գահիրէ Ապտինի գարագոյին գէմը, Սփինքս
դեղարանին կից, և Շարա Մուհամէտ ալիաթը-
փէթ—էլ—Էնէպա, Թիւ 1

Կը պատահէ ոսկիէ ևւ արծաթէ զարդանկար
(միւնէրի) ևլ դրուագեալ տաւ աւանդ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԻՆՉՈՒՆ ԿՈՒԳԱՆ

Աղեքսանդրիոյ նաւահանգիստը ամեն շաբ-
թու կընդունի մէկ երկու կարգ հայ հիւրեր, ո-
րոնց ինչ նպատակաւ եկած ըլլալն՝ կրած տա-
րազներն կը հասկցուի:

Կարգ մը կայ որ շալխար, ոտքը եկմէնի ու
գլուխը պոմպէ սեւ կոլվակի մը մէջ առած ըլլա-
լով, իր այդ թրքո-ամերիկեան ներդաշնակու-
թիւնը՝ դէպի Միացեալ Նահանգները երթալու
համար ունեցած իղձն ու փափազը կը մատնա-
նիչէ:

կարգ մ'ալ կայ որ լայնածաւալ կօշիկ, նեղ բանձալոն ու շնչարգելութիւնը սաստկացնող բաճկոն կը հագնին, աւելցուր ասոնց վրայ անձիւնած կամ մկրատուած պեխերը, հանեղրձ պտուկի գլխարկով, և ահա գէմդ կուհննաս հայ-եանքինը:

Բայց ինչո՞ւ կուգան այս վերջինները:

Սմարտեան մանածոյով մը՝ խորին փորձառութեամբ այս հարցը լուծած է հետեւալ կերպով.

Ա. Մաս մը՝ կարգուելու համար կուգան, բայց առանց ամուսնութեան ետ կերթան:

Բ. Մաս մը՝ հայրենիք երթալու միտքով կուգայ ու հոս կը մնայ:

Գ. Փոքրիկ մտա մ'ալ օգտփոխութեան համար կուգայ և խորմաշրի կը ճամբորդէ:

Դ. Մաս մ'ալ՝ հոն սրճարան չգտնուելուն պատճառաւ սրտի ճիւղին նեղացած հոս կուգան՝ քակամայիլ խաղալու համար:

Ե. Մաս մ'ալ կայ որ Բաքուի տաճարի շերտ երկրպագու է. «Սանկո նստած, տիւղ բախին առաջագ, մէղէները ուզածիդ պէս». էթ-բաֆգ տրիտառններդ, ըսեն, կանչեն, խաղանքէնք ընեն. հոն ասանկ բան չի կայ. գործս ազէկ էր, ազէկ էր տո՛ւ՝ ետքամ'մ'ս:

Պէտք է խոստովանիլ թէ այն հինգ հատուածներու վերջին երկուքին ենթակայ եղողները միայն ճորտացնուած կը հասնին, որոնց համար չէ որ պիտի խօսիմ, այլ՝ կարգուելու համար եկողներուն:

Պ. Խօսքէլեան անոնցմէ մէկն էր. 40—45 տարեկան. կրճատուած պեխերով ու ծաղկաւեր գէմքով. ուկիէ ժամացոյցն ու շղթան, ձեռքի արծաթապատ գաւապանը ու ճէնթլմէնի քալորը կարծել կուտային թէ մէջքը կապած ըլլալու էր առ նստալն 500 հատ կլորիկներ. որոնց ամենակարող աղբեցութեամբը հոս եկած էր հայ օրիորդ մը գտնելով հետը կարգուելու համար. իր այս նպատակը չուշացաւ դանազան շրջանակներու մէջ յայտնելու, որոնք կապահովցնէին զինքը թէ շնորհիւ մէջքը կապած անգլիական գեղնագոյն ձիաւորներուն, անմիջապէս պիտի կըրնար հասնիլ իր փափագին:

Ու թէ և վերոյիշեալ սմարտեան մանածոյութեամբը հարկ եղած գիւրութիւնները իրեն տալ խոտացած էր, սակայն ինքնալ պարապ չէր կեցած, երբ աչքերը պատուհաններուն տնկած փողոցները կը շփշփէր, պատշգամբի մը վրայ տեսաւ օրիորդ մը որ գիւմաղի գրացուհիին հետ կը խօսակցէր: Անոնց հայերէն խօսակցութիւնը մեր փեսացուին աչքերը շուրս բանալ տուին, և օրի-

որդն ալ՝ ինքզինքը բարեձենելու հապճեպին մէջ շփոռցաւ սուր նայուածքով մը խայթել պարոնը:

Պ. Խօսքէլեան դուռը ըլլալ կարծելով իր կէսը՝ դնաց շուտ մը իմաց տալ իր տանտիրուհիին, որուն նման շատերը իրենց վարձուորներուն սիրոյ միջնորդը կըլլան: Երկար բարակ բացատրեց փողոցին տեղը, տունին դիրքը, աղջիկան տեսքը, հագուածքը, խօսուածքը: Ճանտիրուհին հասկցաւ թէ օրիորդ ֆնաւրգիսեանին համար էր. ուստի նոյն օրն իսկ դնաց աղջկան ձեռքը ինդրել իւր մօրմէն որ արդէն այրի մըն էր:

Խալվուզ—տանտիրուհին իր գովասանքներուն պարութեան բանալով, սկսաւ փեսացուին անվերջ բարեմասնութիւններուն վրայ խօսիլ. «Ամերիկայի մէջ մատով կը ցուցնեն եղեր աստղուն դարձունէութիւնը. օրական ինկիլիդի օսկի մը կտանէ եղեր. պիւթիւն ֆապրիկան ձեռքին մէջն է եղեր. վրան գլուխը ջուրի մէջ 100 օսկի կընէ. կարողութիւնը ըսէքնէ՝ զինքը ճանչցողներուն բերնէն իմացեր եմ որ հիշ տէյիլ ինէ հազար հատ մը կը պոնէ. ևայլն, ևայլն:

Օրիորդին մայրը՝ տիկին ֆնաւրգիսեան՝ որ սատանայամտութեան մասին միջնորդ կնկան վարպետը կրնար համարուիլ, քանի մը օրէն կը պատասխանէր ըսելով զայն ճամբու գնելէ վերջ հետեւեալ խօսեցաւ աղջկանը.

«Աղջիկս, եկուր սա մարդուն հետ քեզինը շանէնք, ետքն ալ հէլպէթտէ մահանա մը դըտնելով ետ կընենք, չիւնքիւ, թապիյէթը ու ըլլալ ճըլլալ չի ճանչցուած մարդուն ո՞ր խելացին աղջիկ կուտայ. տմա փարա ունի եղեր, փարան վաղը կը հատնի ֆախաթ թապիյէթը մինչեւ գերեզման կերթայ: Ո՞վ ըլլայ նէ քեզ չառներ, զաթը առ քաղաքս խալսէ եղեր է որ աղջիկ մը քանի մը անգամ կը նշանուի. քեզի Ամերիկա տալէս ետքը՝ առնող չա՛տ. ես կը նայիմ որ սանկ քեաթիպի, տօքթոռի եախօտ արուղաթի պէս մէկու մը տամ քի ալլըխով եա ուտով փութով փարա կը վառտիին, հէմ ես ըրահաթ կըլլամ հէմ գուն»:

Մօրը բնաւորութեան մանրանկար եղող աղջիկը համաձայնեցաւ և իրենց որոշումը հաղորդեցին խալվուզ—տանտիրուհուն:

Անցած մեծ պահքին կատարուեցաւ նշանտուքը. մեր ճէնգլմէնը բաւական արժէքաւոր նուէրներ կը հասցունէր հետզհետէ. սակայն մայր և աղջիկ Զատիկի առթիւ կուգէին խոշոր պատառ մ'ալ փրցունել ու առջի պսակ չեկած՝ ոտքերուն տակ սապօնը դնել: Ուստի հիւանդ ձորացոյցին աղջիկը ու բժիշկի և գեղորէից ծանր ծախքեր մէջտեղ հանեցին: Վերջապէս, ալ

պէտք էր միջոց մը գտնել, ազատուելու այդ փե-
սացու ն. ուստի օր մը մայրը առանձին սեն-
եակ մը տանելով զայն, ըսաւ. «Բռնի գաս նէ՛
աղջիկս գէշ կըլլայ կոր քեզի համար. աղջիկս
չպիտի մեռնենք. ալ հոս մի՛ գար. խրամէթդ
ուրիշ տեղ վնասէ. պախըճին պիլէ ըսաւ քի օ-
տոր մարդ մը կուգայ ձեր տունը, մինչև չի
հեռացնես նէ զաւակդ. չըռնտնար. բիճա կընիմ,
մէյ մ'ալ հոս ոտք մի՛ կոխեր. ունեցածս չու-
նեցածս անոր ուղուրին խարճեցի. սէպէպ ըլ-
լողը Աստուծոյ գտնէ, և այլն խօսքեր, որոնք
յանկարծակիի բերին փեսացուն. սակայն մին-
չև այն ատեն այնպիսի գորով ու սէս մը ցոյց
տուած էին իրեն որ զոքանչին խօսքերը իրաւի
տեղ կըլնէ ու քնաց իմացուց միջնորդ-տանտի
բուհիին, որ առաջարկեց անգամ մը Շէյխ Մու-
համէտին գիմել, որուն գուշակելու համբաւը
տարածուած է քողաքիս մէջ:

Պ. փեսացուն, որ շուարուէն ինչ ընելը չէր
գիտեր, գիմեց Շէյխին որ հետեւեալը վճռեց.

«Իսկ վեց տմիս առաջ հեռու տեղէ մը հոս
եկար ու մօտերս ալ տրտմեցար. բարկացած ես.
կարգուիլ կուզես, աղջկան մը վրայ սէր ունիս,
բայց ան քեզ չսիրեր. անոր հետ կարգուիլդ ա-
ղէկ չի գար քեզի. թուղթ մը գրեմ տամ որ
իրմէ պաղիս, ու նայէ որ հոս չի կարգուիս»:

Շէյխը որ այս վճիռը կ'արձակէր, խլաւովոց-
տանտիբուհուն ներշնչմամբն էր, վասնզի այս վեր
ջինը նախապէս համաձայնած էր տիկին Ֆընտըգ-
հիեանի հետ, փեսացուն քաջուած, գեղնագոյն
ծիւղորներէն իր ալալիսը առնելով:

Շէյխին խօսքերը երբ թարգմանեցին մեր պա-
րոնին, սարսափ, ու թուլթի պէտք չի կայ ը-
սելով, ոչ միայն նշանածը ալ չի յիշեց, այլ հե-
տեւեալ օրը ինքզինքը շոգենաւ նետեց. Ամերի-
կա վերադառնալու համար:

ԱՇԽԱՐՀ

ՃԱՆՈՒՄ ԿՐԻՒԻՄ

Մարաֆիլէ փողոց

Տնօրէնութիւն

Վահան Յովհաննէսեանի և Խայկի Մուրաշեանի

Ճաշարանս իր հաստատութենէն ի վեր պատ-
րաստած համալուս կերակուրներուն պատճառաւ
փափկաճաշակ ազնիւ յաճախորդաց գնահատու-
մին և քաջալերութեանը արժանացած ըլլալուն,
այս անգամ ճաշարանը աւելի ընդարձակելով
կերակուրներու տծսակներն ալ աւելցուցան էնք:

Մեր նշանաբանն է մօքրութիւն և արագ
սպասարկութիւն, ասոնցմէ զատ, գինեւոր ալ
խիստ գիւրամատչելի են:

Այցելութիւն մը բաւական է մեր այս ը-
ռածները հաստատելու:

ԶՄԻՌՆԻԱԿԱՆ ՀԱՅ ԴՊԱՐԱՎԱՅԱՌԱՏՈՒՆ

Մ. ՊԵՏԸՏԻՄԵԱՆ

Թրիպոլիտի ետին՝ հօթէլ սէն Ժօրժի կից.

Ամեն ինչով շաւ անստեղծներէ զաւ. Զմիռ-
նիայէն քերուած ընտիր օղի, գինի, ձեթ, կարագ
աճառ, տոբակ, զոնսեր, փայտ, պատարաս անու-
շեղէն եւ այլուսկեր՝ անսխիւ, բալ, բարձր ընկոյզ
եւ յում (զըղճըղ). անու Արաշէհիի համալսին
շուրք որ դժուարամարտիսն կը դարձանէ

Սոյն վաճառատներ կը խոստանայ իրեն դի-
մող յաճախորդները գոհացնել անխաղախ ապ-
րանքներով եւ գիներու չափաւորութեամբը

Մեր այս ըսածը հաստատելու համար այցե-
լորդն մը բաւական է.

Մեծափական ու փոքրափական յաճախա-
րութիւն անմիջապէս կը կատարուին:

ՏՕՐՈՐ ՓԱՇԱՅԵԱՆ ԽԱՆ

Խորհրդական Բժիշկ Պարսից քաղաքում
Իշխանին

Այս անգամ Աղեփանդիս հաստատած յի-
մնով, պատիւ ունի յայտնելու յարգելի Հայ հա-
սարակութեան, որ ամեն օր առաւօտներ ժամը
9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կըն-
դունի իր սան մէջ. Աթթարին փողոց թիւ 31,
Մզկիթին դէմը, երկրորդ յարկ:

Ներքին եւ փոքրածախան հիւանդութիւննե-
րու հետ, կը դարձանէ անու երախաներու հիւան-
դութիւնները, 15 արոյն մասնագիտական փորձա-
նորքամբ:

Յացող կերպով կը դարձանէ անու Արիօնա-
մոլորիսն եւ Մորթիւնաւորիսն, որունց դէմ
հնարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ
Պարսկաստանի մէջ հազարաւորներ անվնաս քողած
են այդ մոլորիսնը:

3

ԳՈՒԻՏՈՐ ԼՈՒԾԻՆԵԱՆ

Նոր Բաղդիթ պատկերազարդ, Փրանսահայ
Երկու հասր՝ 1874 մեծադիր երեսներով:

Ազգ. — Մասնագիրն փափաքելով որ իր երկասի-
րութիւնն մատչելի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մա-
նաւանդ որ իւր նպատակն է ամենին չշահիլ, այլ վնաս-
տով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հաստատու-
րը ի միասին 25 ֆրանքէն աւելի չարժեն:

Դիմել հեղինակին հետեւեալ հասցեով:

M. G. DE LUSIGNAN

108. Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնք կանխիկ վճարմամբ: